ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՈՒՐՅԱՆ ՄԱՐԱՏ ԿԱՌԼՈՍԻ

ԲԱՐԴ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ 00.01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր Հրանտ Միքայելի Ավանեսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Հոգեբանական գիտությունների դոկտոր Մելս Պարգևի Մկրտումյան
	Հոգեբանական գիտությունների թեկնածու Հարություն Արտավազդի Բաբայան
Առաջատար կազմակերպություն՝	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ. ապրիլի 30-ին, ժ. 14:00-ին Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2019 թվականի մարտի 21-ին:

Հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, հոգեբանական
գիտությունների դոկտոր՝ Կ. Ե. Վարդանյան

ԱՏԵՆԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հոգեբանության առջև ծառացած բարդ ու տարատեսակ խնդիրների լուծումը անհնար է պատկերացնել առանց անձի հոգեբանական առանձնահատկությունների և տարատեսակ հնարավորությունների իմացության: Անձի մասնագիտական գործունեության այդպիսի հոգեբանական առանձնահատկություններից, որտեղ առավել լիարժեք և ցայտուն դրսևորվում են ինչպես նրա ընդունակությունները, պատրաստվածությունն ու բոլոր հնարավորությունները, այնպես էլ նրան բնորոշ սահմանափակումները, համարվում է սուբյեկտիվ ընտրության՝ որոշման ընդունման գործընթացը:

Մարդու մասնագիտական ակտիվության բազմաթիվ բնագավառներում նրա գործունեության արդյունքը և որակը բոլոր դեպքերում մեծապես պայմանավորված է պայմաններին և իրավիճակին համապատասխան որոշման ընդունման գործընթացով: Նշված խնդրի վերաբերյալ հոգեբանության ժամանակակից հետազոտությունները ցույց են տալիս, որ հենց որոշում ընդունելն է պայմանավորում գործունեության բովանդակային, ընթացակարգային և արդյունավետ հարաչափերը: Հետևաբար անհամապատասխան և սխալ որոշումներ ընդունելը կարող է անցանկալի ձևով անդրադառնալ գործունեության արդյունքի վրա: Ըստ Ա.Վ.Կարպովի որոշման ընդունման սխալներն իրենց հերթին բաժանվում են առաջին և երկրորդ կարգերի: Այդ իսկ պատճառով գործունեության ռացիոնալիզացիայի և օպտիմալացման վերաբերյալ կիրառական հետազոտությունների ժամանակ նույնպես պիտի հաշվի առնվեն որոշում ընդունելու բոլոր օրինաչափությունները: Այստեղ է ինչպես որոշում ընդունող անձի ընդհանուր ուսումնասիրության գործնական նշանակությունը, այնպես էլ անմիջապես այն ամենի, ինչը կապված է որոշում ընդունելու հետ: (Ա.Վ.Կարպով, 1991):

Որոշում ընդունելու գործընթացի մասին դիպուկ միտք է արտահայտել Բ. Ֆ. Լոմովը նշելով, որ որոշման ընդունումը առկա է գործունեության բոլոր «բաղադրիչներում», ինչպիսիք են՝ որոշում ընդունելու գործընթացը, նպատակի ձևավորումը, ստացվող տեղեկատվության մշակումը, գործելու միջոց ընտրելը, գործողության ծրագիր կազմելը, այն մեկուսացված գործընթաց չէ (Բ.Ֆ.Լոմով, 1984):

Որոշման ընդունման ուսումնասիրության հիմնարար մոտեցումները ներկայացված են Ռ. Սոլսոյի և համահեղինակների աշխատանքներում, որտեղ հեղինակը մանրամասնորեն վերլուծել է որոշում ընդունելու հոգեբանական առանձնահատկությունները, մեկնաբանել հիմնախնդրի տեսական և փորձարարական հետազոտության մեթոդաբանությունը, որոնք հիմնված են հետևյալ գործոնների վրա՝ ինդուկտիվ դատողություն, «իրատեսականություն», փաստարկում, ներկայացուցչականություն և հավանականությունների գնահատում (Ռ. Սոլսո, 2006): Այստեղ ցանկալի է տարանջատել և մեկնաբանել «որոշման ընդունում» և «որոշման կայացում» հասկացությունների տարբերությունը: Առաջինն առավելապես համապատասխանում է այդ գործընթացի ավարտական փուլին, իսկ «կայացումը»

վերաբերվում է որոշման բոլոր փուլերի բնութագրմանը: Այդ իսկ պատճառով տեսական և փորձարարական հետազոտության ընթացքում կիրառվում է «որոշման ընդունում» եզրույթը, որին հանդիպում ենք նաև Ա. Լոքյանի, Դ. Հայրապետյանի, Ն. Հարությունյանի և Ա. Նալչաջյանի աշխատանքներում:

Գրականության վերլուծությունը թույլ տվեց հստակեցնել հետազոտության տեսական նախադրյալները, որոնք կապված են որոշման ընդունման գործընթացում փաստարկման հետևյալ մոտեցումների հետ՝ կվազիաքսիոմատիկ տեսությունում դատողությունների ձևակերպման վերաբերյալ մոտեցման հետ (Բ.Ա.Կորբինսկի, 2001), ընտրություն կատարելու խնդիրների և առաջադրանքների օրինաչափությունների ուսումնասիրման վրա հիմնված որոշում ընդունելու բազմաբնույթ դատողության մասին մոտեցման (Ն.Վ.Բորոբյով, 1963), որոշման ընդունման վրա ազդող իրադարձությունների պատճառահետևանքային կապերի մասին մոտեցման (Ա.Միչոտե, 1963) և որոշումների ընդունման նախընտրության ու փոխարինման չափանիշների (Ռ.Կենի, Հ.Ռայֆա, 1981) հետ:

Հաշվի են առնվել նաև որոշում ընդունելու հիմնական, մասնավորապես՝ փիլիսոփայական, սոցիոլոգիական և հոգեբանական մոտեցումները: Որոշում ընդունելու տեսությունը, որն առաջարկում է Ն. Որոբյովը, ներառում է մաթեմատիկայի, վիճակագրության, տնտեսագիտության, կառավարման և հոգեբանության գաղափարներ և մեթոդներ: Այն հիմնված է ընտրություն կատարելու ժամանակ խնդիրների և առաջադրաքների օրինաչափությունների ուսումնասիրման վրա: Հեղինակն առանձնացնում է երկու տեսություն՝ նորմատիվ, որը նկարագրում է որոշում ընդունելու ռացիոնալ գործընթացը և նկարագրական, որը նկարագրում է որոշում ընդունելու պրակտիկան (Ն. Որոբյով):

Ինչպես նաև հաշվի են առնվել հայրենական հետազոտություններում մտածողության, ստեղծարարության և որոշումների ընդունման հիմնահարցերին նվիրված առկա դրույթները (Կ. Վ. Ոսկանյան, 1980, Ա. Լ. Ազիզյան, 2004, Դ. Ռ. Հայրապետյան, 2006, Լ. Ա. Սահակյան, 2006, Հ. Գ. Պետրոսյան, 2007 և ուր.):

Այսպիսով, նշված հայեցակարգային մոտեցումների և հետազոտական աշխատանքների հիմնական դրույթների վերլուծության ամփոփումը թույլ տվեց հիմնավորել աշխատանքի արդիականությունը և հետագայում մշակել փորձարարական հետազոտության ռազմավարությունը:

Հետազոտության նպատակը: Հետազոտել գործունեության անորոշության պայմաններում որոշումների ընդունման արդյունավետությունը պայմանավորող անհատական առանձնահատկությունների և իրավիճակային չափանիշների դրսևորման ու զարգացման շարժընթացի յուրահատկությունները:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ գործունեության յուրահատուկ պայմաններում որոշումների ընդունման արդյունավետությունը պայմանավորված լինելով անձի ճանաչողական ոլորտի առանձնահատկություններով, դրսևորվում և

կրում է զարգացման յուրահատուկ շարժընթաց, որը կախված է մասնագիտական գործունեության յուրահատկությունից և փորձառությունից:

Հետազոտության **խնդիրներն** են.

1. Վերլուծել մասնագիտական և օպերատիվ գործունեության պայմաններում որոշումներ ընդունելու արդյունավետությունն ապահովող հոգեբանական գործոնները:
2. Իրականացնել որոշումների ընդունման հետազոտական մեթոդիկաների ընտրության և համալրման տեսամեթոդաբանական հիմնավորում, համապատասխան հարցարանի տեղայնացում:
3. Բացահայտել որոշումների ընդունման, ինտելեկտի տրամաբանական տարրի հատկանիշի և համարձակության, մասնագիտության ու աշխատանքային փորձի հետ կապված դրսևորումները:
4. Գնահատել որոշման ընդունման և ընկալման հատկանիշի (պատրանքային տարբեր երկրաչափական օբյեկտների ընկալում) դրսևորման առանձնահատկությունները:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենխոսական հետազոտության տեսամեթոդաբանական վերլուծության և բազմափուլ փորձարարական աշխատանքի արդյունքների գիտական նշանակությունն այն է, որ բացահայտված եզրակացությունների ամփոփումը կարող է համալրել բարդ իրավիճակներում օպերատիվ որոշումների ընդունման հոգեբանական առանձնահատկությունների մասին տեղեկությունները: Մասնավորապես բացահայտված է քննչական գործունեության փորձի անդրադարձը՝ որոշումների ընդունում, խուսափում, հետաձգում, զգոնություն և գերզգոնություն հարաբերակցության վրա: Ապացուցվել է, որ հետազոտության գործընթացում կիրառված մեթոդների համակազմը հանդիսանում է հոգեկանի ճանաչողական ոլորտի դրսևորումների ճշգրիտ և հուսալի արձանագրման միջոց:

Սույն հետազոտության կարևորությունն ու նշանակությունը բխում է այն փաստից, որ որոշման ընդունման և ինտելեկտի միջև հարաբերակցության վերաբերյալ աշխատանքները սակավ են և բացակայում են հայրենական հոգեբանությունում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը. Նախ նշենք, որ հետազոտությունը հիմնված է գիտական իմացությունների և գիտական մեթոդի բազմաթիվ գիտակարգերում ընդունված սկզբունքների վրա: Երկրորդը՝ մենք ելել ենք գիտական հոգեբանությունում գիտելիքերի ձեռքբերման հիմնական էմպիրիկ միջոցներից, որոնք բխում են դետերմինիզմի, միասնության և զարգացման սկզբունքներից (ըստ Բ.Լոմովի, 1984, Ռ.Սոլսոյի, 2001 և Ա.Մակլակովի, 2006):

Տվյալ կոնկրետ դեպքում որպես հիմք վերցրել ենք որոշում ընդունելու խնդրի վերաբերյալ Ռ. Սոլսոյի (2006) մշակած տեսական մոտեցումը, որը հոգեկանի այդ գործընթացը դիտարկում է ինդուկտիվ դատողության, «իրատեսության», փաստարկման, ներկայացուցչականության և հավանականությունների գնահատման տեսանկյունից:

Հետազոտության տեսական նախադրյալները կապված են Բ. Կոբրինսկու (2001)

հետևյալ մոտեցումների հետ, որոնք վերաբերում են կվազիաքսիոմատիկ տեսության դատողությունների ձևակերպմանը, որոշման ընդունման Ն. Որոբյովի (1963) բազմամասնագիտական տեսությանը՝ հիմնված խնդիրների և առաջադրանքների ժամանակ ընտրության օրինաչափությունների ուսումնասիրման վրա, Ա. Միչոտեյի (1963) որոշում ընդունելու վրա ազդող իրադարձությունների պատճառահետևանքային կապերի մոտեցմանը: Հաշվի են առնվել նաև որոշման ընդունման հիմնական հետազոտական ուղղությունները՝ կապված ռիսկի, մասնավորապես՝ փիլիսոփայական (Վ.Դիեվ, 2006, Ն.Վորովյով, 1963), սոցիոլոգիական (Ա.Ալղգին, 2002) և հոգեբանական մոտեցումներին (Տ.Կորնիլովա, 2003):

Հետազոտության տարբեր փուլերում կիրառվել են հետևյալ **մեթոդներն ու մեթոդիկաները.**

- տեսական և համեմատական վերլուծության մեթոդ,
- թեստավորման մեթոդ՝ ՈԸՄՀ (որոշումների ընդունման մելբուռնյան հարցարան) և Շուբերտի ռիսկի գնահատման հարցարան,
- հարցաթերթիկային հարցման մեթոդ՝ փորձագիտական գնահատման մեթոդ (հատուկ մշակված հարցարանի միջոցով),
- որոշումների ընդունման ընթացքում “պատրանքների” ազդեցության գնահատման մեթոդիկա (վերամշակված և ձևափոխված տարբերակ),
- մաթեմատիկական վիճակագրական վերլուծության մեթոդ (SPSS):

Հետազոտության օբյեկտը: Մասնագիտական գործունեության բարդ իրավիճակներում օպերատիվ որոշումների ընդունման հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան: Որոշման ընդունման ռազմավարությունների դրսևորումները:

Հետազոտության համակազմը: Հետազոտական աշխատանքներում ներգրաված մասնակիցների ընդանուր թիվը կազմում էր 150 մարդ (որոնց թվում՝ 10 փորձագետ): Դրանք բաժանված էին երեք խմբի՝ 1) ուսանող իրավաբաններ, 2) աշխատող իրավաբաններ-քննիչներ և 3) հումանիտար մասնագիտութունների դասախոսներ (վերահսկիչ խումբ): Անկախ փոփոխականների վերահսկման պահանջից ելնելով՝ երեք խմբերում ներգրավված մասնակիցները համապատասխանում են համարժեքության (equivalent) սկզբունքին և կվազիփորձարարական հետազոտական ծրագրի չափանիշներին:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Բարդ իրավիճակներով հագեցած մասնագիտական գործունեության պայմաններում օպերատիվ մտածողության կառուցակարգի համատեքստում աճում է առաջատար այն որակների հետազոտման հրատապությունը, որոնք պայմանավորում են որոշումների ընդունման արագությունն ու ճշտությունը, տրամաբանական բաղադիչը, համարձակության աստիճանը: Նման մասնագիտությունների տեր անձանց և մասնավորապես քննիչների որոշումների ընդունման արդյունավետությունը ունի

յուրահատուկ ընթացակարգ և պայմանվորված է ճանաչողական հետևյալ բաղադրիչներով՝ զգոնություն, խուսափում, գերզգոնություն, հետաձգում:

2. Հիմնավորված է բարդ իրավիճակներում որոշումների ընդունման հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման համար հոգեդիագնոստիկ գործիքակազմը՝ ՈԸՄՀ, Շուբերտի համարձակության թեստը, Ռավենի զարգացող մատրիցաների սանդղակը և մշակված փորձարարական ծրագիրը:

3. Որոշման ընդունման տարիքային առանձնահատկությունների և մասնագիտական գործունեության ազդեցության համեմատությունը արձանագրեց, որ օպերատիվ բնույթի փորձից (քննիչներ) ազդեցության որոշակի օրինաչափություններ, մասնավորապես՝ տարիքային ցուցանիշները որոշում ընդունելու ժամանակ դրականորեն են փոխկապակցվում զգոնության, գերզգոնության և ինտելեկտի հետ: Ինտելեկտի ցուցանիշները դրականորեն են փոխկապակցվում զգոնության ու խուսափման հետ, իսկ հետաձգման հետ բացասականորեն են կապված:

4. Բացահայտվել են ինտելեկտի առանձնահատկությունները ոչ վերբալ տրամաբանության ցուցանիշով, որոնք ինտեգրալ են ընդհանրացման, վերլուծության և համադրման հարաչափերով ոչ վերբալ ազդակի նյութի որոշման հիման վրա: Օպերատիվ բնույթի մասնագետին անհրաժեշտ է կարողանալ անցկացնել խնդիրների համալիր վերլուծություն և լուծել խնդիրները անորոշության պայմաններում:

5. Փորձարարական հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ պատրանքային ազդեցությունը ներգործում է ոչ միայն հայտնաբերման շեմերի վրա, այլև որոշման ընդունման գործընթացի վրա: Տվյալ դեպքում որոշման ընդունման գործընթացը պայմանավորված է համընդհանուր առանձնահատկություններով (բնույթը՝ քողարկված կամ իմպլիցիտային և բացահայտ կամ էքսպլիցիտային) և առանձնահատուկ է դրսևորվում՝ կախված մի շարք գործոններից:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ատենխոսության տեսական նշանակությունն այն է, որ մշակված և փորձարարական ճանապարհով ստուգված տեսական նյութը կարող է լայնորեն կիրառվել հոգեդիագնոստիկայի խնդիրների լուծման համար: Ներկայացված տեսական նյութն իր հիմնավորվածությամբ կարող է նաև խթանել դիտարկվող ոլորտի հետագա գիտական ուսումնասիրությունները:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ իրականացվել է որոշման ընդունման հուսալի գնահատում, որը փաստարկվել է այլ մեթոդիկաների հետ համադրությամբ: Կատարված հետազոտության արդյունքները հնարավորինս կարող են ապահովել քննչական գործունեության որակի բարելավումը, ինչպես նաև նպաստել անորոշության պայմաններում հնարավոր պատրանքային ազդեցության հաղթահարմանը (ռազմական, փրկարարական, ոստիկանական և այլ ոլորտներում):

Սույն հետազոտությունը կարող է նպաստել նաև վերբալ և ոչ վերբալ խոչընդոտների հաղթահարման համար հատուկ վարժանքների (training) մշակմանը:

Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովված է գիտահետազոտական հուսալի և տեղայնացված մեթոդների ընտրությամբ, վիճակագրական վերլուծության մեթոդների կիրառությամբ, հետազոտական ընտրանքի կազմով և ձևավորման հստակ չափանիշներով:

Աշխատանքի փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները 2014-2018թթ. զեկուցվել և հավանության են արժանացել ՀՀ ՊԿԱ կառավարման հոգեբանության և ԵՊՀ ընդհանուր հոգեբանության նիստերում, ինչպես նաև ներկայացվել են մի շարք գիտաժողովներում և սեմինար քննարկումների ընթացքում:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Ներկայացվող ատենախոսական աշխատանքը շարադրված է 142 համակարգչային էջի վրա, բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից (օգտագործվել է 184 գիտական աղբյուր) և հավելված բաժնից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսական աշխատանքի **ներածական** մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը և հետազոտվածության աստիճանը, ձևակերպված են աշխատանքի հետազոտության նպատակը, խնդիրները, վարկածը, օբյեկտը և առարկան, տեսական և մեթոդաբանական հիմքը: Այնուհետև ներկայացրել ենք կիրառված մեթոդների, հետազոտության ընտրանքի նկարագրությունը, հետազոտության գիտական նորույթը, ցույց ենք տվել աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ձևակերպել ենք պաշտպանության ներկայացվող դրույթները և ներկայացրել հետազոտության արդյունքների հավաստիությունը և փորձաքննությունը: Ներածության վերջում մենք ներկայացրել ենք նաև ատենախոսական աշխատանքի կառուցվածքի և ծավալի համառոտ բնութագիրը:

Աշխատանքի **առաջին գլուխը** վերնագրվել է «Որոշման ընդունման հոգեբանական հիմնախնդրի հայեցակարգային վերլուծություն»: Այն ներկայացվել է երկու ենթագլուխներով, որոնցից առաջինում ներկայացվում է որոշման ընդունման հոգեբանական հիմնախնդրի ուսումնասիրության տեսական դրույթների վերլուծություն, իսկ երկրորդում՝ որոշման ընդունման արդյունավետությունը պայմանավորող գործոնների դասակարգում: Որոշման ընդունման հիմնախնդրի վերաբերյալ Բ. Լոմովի, Ա. Կառպովի, Ա. Լեոնտևի, Վ. Շադրիկովի, Ջ. Գրոսսի և այլոց հայեցակարգերի տարրապատկերը անհրաժեշտություն առաջ բերեց անդրադառնալու որոշման ընդունման հոգեբանական հիմնախնդրի ուսումնասիրության տեսական դրույթների հիմնավորմանը և դրանց արդյունավետությունը պայմանավորող գործոնների վերլուծությանը: Գիտական ամենատարբեր շրջանակներում մշտապես կարևորվել է որոշման ընդունման փիլիսոփայական և մեթոդաբանական հիմքերի փնտրտուքը, որը, նախ և առաջ, արտահայտվել է մարդու կամքի և ազատության,

բարու և չարի պայքարի, արդարության և շատ այլ հիմնահարցերի աշխարհայացքային խնդիրներն իմաստավորելու մեջ (Պ.Անոխին, 1978, Վ.Ալախվերդով, 2006, Դ. Հայրապետյան, 2010, Դ.Կանեման, Պ.Սլքվիկ, 2005):

Այսպես, Վ. Դ. Շադրիկովի առաջարկած մոտեցումը, և՛ ավելի ուշ Ա. Վ. Կարպովի գործող մեթոդաբանության մոտեցումը՝ կապված որոշում ընդունելու հոգեբանական համակարգի հետ, տարբերում են մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին՝ որոշում ընդունելը երկու հայեցակարգերում էլ ներկայացված է որպես գործունեության կառուցվածքագործառական մոդելի բաղադրիչ: Երկրորդ՝ նկատվում է անհատական հոգեբանական գործոններից և իրավիճակային առանձնահատկություններից զգալի վերացարկում, որը որպես միջնորդ որոշում ընդունելու կարգավորման հարցում, ձգտում է ներկայացնել այն իբրև գործունեության հոգեբանական վերլուծության տեսական օբյեկտներից մեկը: Երրորդ՝ տարբեր հեղինակների կողմից նշված գործունեության հիմնական հոգեբանական բաղկացուցիչների զուգադիպությունը պայմանավորված է ուսումնասիրվող օբյեկտի մեթոդաբանական մոտեցման յուրահատկությամբ: Չորրորդ՝ Ա. Վ. Կարպովի հայեցակարգում որպես ինտեգրվող մեխանիզմ հանդես է գալիս մետակոգնիտիվ կարգավորման համակարգը, որի զարգացման մակարդակը պայմանավորված է ընդհանուր ինտելեկտով՝ դրանով իսկ հաստատելով հեղինակի կոգնիտիվ հայացքներին կողմնակից լինելը: Անձի գենդերային յուրահատկությունների ամբողջությունը ներառում է գենդերային անհատականությունը, անձի՝ սեռատիպային ձևերի և վարքի մոդելների հետ կապված մասկուլինային և ֆեմինինային գծերը, կարծրատիպերը և դիրքորոշումները: Կան մի շարք գենդերային յուրահատկություններ, որոնք միշտ չէ, որ փոխկապակցված են լինում, քանի որ կախված են մի շարք գործոններից:

Այս բաժնի տեսական վերլուծությունից պարզ է դառնում, որ թերի կամ անարդյունավետ որոշումների ընդունումը պայմանավորված է իրազեկվածության աստիճանով, տեղեկության մշակման ընտրական կողմնակալությամբ, այլընտրանքների դիտարկման բացակայությամբ, նախընտրելի տարբերակի ռիսկերի ուսումնասիրման անկարողությամբ և դատողությունների շտապողականությամբ: Որոշման ընդունման հոգեբանական հիմնախնդրի ուսումնասիրության տեսական դրույթները հիմնվում են հոգեբանական տարբեր տեսությունների վրա, ինչը որոշակիորեն նախանշում է համապատասխան հետազոտական մեթոդների ընտրությունը:

Մի շարք հետազոտություններում նշվում է ընդհանուր միտք այն բանի մասին, որ գիտակցաբար որոշում ընդունողները կարող են հաշվի առնել իրենց որոշման արդյունքներին տրվող հնարավոր հուզական հակազդումները (Դ.Բելլ, 1982, Ռ.Ջոզեպս, Ռ.Լառռիք և ուր., 1992, Ի.Ռիտով, 1996): Բազմաթիվ են տարիքային տարբերությունները ազդեցության աստիճանը ուսումնասիրող հեղինակները, որոնք բացահայտում են երեք տարիքային խմբերի համեմատությունները. տարեցներ և

երիտասարդներ, երիտասարդներ և միջին տարիքի անձինք, միջին տարիքի և տարեցների համեմատություններ (Ե.Պետերս, Թ.Հեսս, 2007, Կ.Սունգիան, Մ.Հեալեյ, 2008, Ա.Դառռելլ, Ա.Մառիսսա և ուր., 2010):

Ատենախոսության այս գլխի վերլուծական ուսումնասիրությունը թույլ տվեց դուրս բերել որոշումների ընդունման արդյունավետության վրա ազդող հետևյալ գործոնները՝ մասնագիտական գործունեության, աշխատանքային փորձի, որոշումների ընդունման տարատեսակների, մտածողության և հիշողության, ինչպես նաև սեռատարիքային տարբերություններն ու դրանց առանձնահատկությունները:

Ատենախոսության **երկրորդ գլուխը** վերագրվել է «Որոշման ընդունման իրավիճակային առանձնահատկությունները և գործունեության պայմանները» և ներկայացվել է երեք ենթագլուխներով: Այս գլխում մենք անդրադարձել ենք որոշման ընդունման իրավիճակային առանձնահատկությունների և գործունեության տարբեր պայմանների վերաբերյալ հոգեբանական մոտեցումների և փորձարարական հետազոտությունների վերլուծությանը: Այս առումով դիտարկվել են տարբեր իրավիճակներում կառավարչական որոշումների ընդունման խնդրի և այդ որոշումների արդյունավետության հոգեբանական պայմանավորող մշակվածության աստիճանը: Փոփոխվող իրադրության դժվարությունները, միանշանակ որոշման և ի սկզբանե պատրաստի բանաձևի բացակայությունն առաջացնում են ղեկավարի կառավարչական կարողություններին և հատուկ պահանջներ են ներկայացնում մասնագիտական պատրաստվածության աստիճանին: Կառավարման գործընթացում որոշումներ ընդունելու առանձնահատկությունների վերաբերյալ բազմաթիվ հոգեբանական ուսումնասիրությունների արդյունքում հաստատվել է, որ ընդունված սխալ որոշումների մեծամասնությունն ունի սուբյեկտիվ պատճառներ և պայմանավորված է ղեկավար անձի անհատական հոգեկան առանձնահատկություններով (Ա. Դերկաչ, Վ. Զազիկին, 1998, Բ. Միլնեռ, 2004, Դ. Կանեման, Փ. Սլովիկ, 2005 և ուր.):

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում որոշումների ընդունման արդյունավետության հոգեբանական առանձնահատկությունների խնդիրն օպերատիվ գործունեության մեջ, որը կարող է բնութագրվել որպես արտակարգ կամ լարված պայմաններում ընթացող իրավիճակ: Արտակարգ իրավիճակում որոշում կայացնելու խնդրի պայմանավորված է սուբյեկտիվորեն ընկալվում և դիտարկվում են որպես սպառնալիք կյանքին ու առողջությանը և առաջացնում են գործունեության սուբյեկտի հոգեկան և ֆիզիկական կարողությունների լարվածություն (Մ. Մկրտումյան, 2008, Տ.Կարնիլովա, 2003, Ս.Կրիկալյով, 2008): Տեսական մասի վերջին ենթաբաժինը նվիրված է որոշման ընդունումը որպես քննչական գործունեության առանցքային բաղադրատարր: Քննիչին բնութագրող հատկությունների մեջ՝ Յու. Մ. Անտոնյանը, Մ. Ի. Ենիկեևը և Վ. Ե. Էմինովը (1996) առանձնացնում են առաջնային նշանակություն ունեցող ինտելեկտուալ, կամային և հաղորդակցական որակները: Ինչպես փաստում են Ս. Արզումանյանն ու Է. Գրինը (2004), քննիչը աշխատում է խիստ անբավարար

տեղեկատվության իրադրությունում: Դրանով էլ պայմանավորված է նրա աշխատանքի բարձր հուզական լարվածությունը, ինչպես նաև վարկածների մշակման և որոշումների ընդունման գործում էվրիստիկական մեթոդների օրինաչափությունը:

Այսպիսով, հնարավոր դարձավ ամրագրել այն փաստը, որ քննիչի մասնագիտական գործունեության ոլորտում մշտապես առկա են արտակարգ և անկանխատեսելի իրավիճակներ, որոնք ազդում են համապատասխան որոշումների կայացման վրա և պայմանավորված են քննիչի անձի առանձնահատկություններով ու ճանաչողական գործընթացների գործնական դրսևորումներով:

Ատենախոսական աշխատանքի **երրորդ գլուխը** վերնագրվել է՝ «Բարդ իրավիճակներին առնչվող որոշումների ընդունման հատկանիշների հետազոտություն»: Այն ներկայացվել է երեք ենթագլուխներով, որտեղ մենք ներկայացրել ենք մեր կողմից կիրառված մեթոդների ընտրության հիմնավորումը, նկարագրությունը և ստացված արդյունքները:

Կատարված փորձարարական հետազոտության փուլերն ու կազմակերպումը.

- Գիտափորձի կազմակերպման և հետազոտական մեթոդիկաների ընտրության ու համալրման տեսամեթոդաբանական հիմնավորում:
- Որոշումների ընդունման հարցարանի տեղայնացման գործընթացի ընթացակարգի մշակում ու իրականացում:
- «Որոշումների ընդունման մելբուրնյան հարցարան (MDMQ)»-ի փորձարկում և այլ հեղինակների հետազոտական արդյունքների հետ համադրում:
- Ատենախոսության նպատակից բխող հետազոտության մասնակիցների խմբավորում՝ 1) ուսանող իրավաբաններ, 2) աշխատող իրավաբաններ-քննիչներ և 3) հումանիտար մասնագիտութունների դասախոսներ (վերահսկիչ խումբ):
- Հիմնական փորձարարական փուլ՝ «Որոշումների ընդունման մելբուրնյան հարցարան»-ով, Ռավենի ինտելեկտի մեթոդիկայով և Շուբերտի համարձակության թեստով գնահատվող անհատական ու խմբային որակների արձանագրում:
- Որոշման ընդունման և ընկալման հատկանիշի (պատրանքային տարբեր երկրաչափական օբյեկտների ընկալում) դրսևորման առանձնահատկության գնահատում:

Հետազոտության 2014-15 թթ. փուլի խնդիրը ենթադրում էր բարդ իրավիճակներում որոշում ընդունելու առանձնահատկությունների մեթոդիկայի փորձարկում: Բազմաթիվ փորձարարական հետազոտությունների վերլուծության հիման վրա տվյալ աշխատանքի համար ընտվել էր «Որոշումների ընդունման մելբուրնյան հարցարան»-ը (Melbourne Decision Making Questionnaire), որը լայնորեն կիրառվում է արտասահմանյան հետազոտություններում: Թեստի տեղայնացման գործընթացն անց է կացվել համաձայն հիմնական դրույթների, որոնք ընդունված են ժամանակակից հոգեախտորոշման մեջ (62 մասնակից): Փորձագիտական հարցման և հաստատումների ձևակերպման վերջնական ամփոփումից հետո իրականացվել է

ընտրված մասնակիցների թեստավորում: Տրված իրավիճակներում վարքի հետաձգման ռազմավարության խմբային ցուցանիշների վիճակագրական վերլուծության արդյունքները համեմատվեցին նմանատիպ հետազոտության արդյունքների հետ: Այս դեպքում ընտրված էր ռուսալեզու տաբերակը, որն առավել մոտ է հայ երիտասարդության սոցիալ-մշակութային առանձնահատկություններին: Այդ տվյալները ներկայացված են նկար 1-ում:



Նկար 1. ՈԸՄՀ միջին վիճակարական տվյալների համեմատություն

<u>Ծանոթագրություն</u>՝ խումբ 1 - Տ. Կորնիլովայի 2013 թ. գիտափորձի, խումբ 2 - մեր հետազոտական ընտրանքի ցուցանիշները

ՈԸ անձնական երեք հատկանիշների և առաջադրանքի կատարման ժամանակի ցուցանիշների միջև առձանագրվեց կոռելյացիոն կապ (հավաստիության արժեքի սահմաններ, եթե $r < 0.45$-ից: $^{*}p < 0.05$ և $r < 0.53$-ից $^{**}p < 0.01$): Համեմատական ուսումասիրության արդյունքների ամփոփումը վկայում է, որ դրանք հիմնականում կրկնում են տվյալներ, որոնք ստացվել են ռուսական ընտրանքի անկախ խմբերում, ինչը փաստում է ստացված արդյունքների հուսալիությունը, ինչպես նաև դարձնում ընդհանուր որոշում կայացնելու տվյալ օրինաչափությունները հայազգի կոնտինգենտի համար:

Այս **գլխի 3.3. բաժնում** ներկայացրած է բարդ իրավիճակներում որոշումների ընդունման հատկանիշների փորձարարական հետազոտության արդյունքները և վերլուծությունը: «Որոշումների ընդունման մելբուրնյան հարցարան»-ի (ՈԸՄՀ) ցուցանիշներին տարբեր իրադրություններում ներկայացված են բովանդակային, մասնավորապես՝ ռեակտիվ գործողություններ: Ենթադրվում էր, որ նմանատիպ պայմաններում որոշումների կայացման չափանիշները և ռիսկի (համարձակության) հակվածությունն կարող են ունենալ ընդհանուր օրինաչափություններ: Այս խնդիրը պարզաբանելու նպատակով իրականացվեց համեմատական վերլուծություն հետազոտվող խմբերի ցուցանիշների (տարիք, աշխատանքային փորձ, զգոնություն, խուսափում, հետաձգում, գերզգոնություն, ինտելեկտ և ռիսկ) և այլ հեղինակների

հետազոտություններում ստացված արդյունքների միջև: Համեմատական վերլուծությունը այս ձևը նպաստեց արդյունքների ռեպրեզենտատության աճին:

Տարբեր հետազոտություններում մատնանշվում է, որ հասունացմանը զուգահեռ ռիսկի հակվածությունը իջնում է և ազդում է որոշումների ընդունման բնույթի վրա: Այս առանձնահատկությունը գրանցվել է նաև տվյալ խմբերում՝ ուսանողների և երկու ավագ խմբերի մոտ դրսևորված ռիսկի արտահայտվածության գումարային բարձր և միջին ցուցանիշներում (համապատասխանաբար՝ ուսանողներ - 81.8 %, քննիչներ - 78.9 %, մասնագետներ – 73.3 %): Սակայն, այնուամենայնիվ հաշվի չեն առնվում մասնագիտության յուրահատուկ առանձնահատկությունները, քանզի մասնագիտական գործունեության պայմանները դրական են ազդում ռիսկային որոշումների ու գործողությունների նախատրամադրվածության վրա: Ենթադրվում է, որ այդ պատճառով էլ միջին վիճակագրական բարձր մակարդակն առավելապես գրանցվել է հենց քննիչների մոտ (42.3 %):

Հիմնախնդիրը պարզաբանելու համար անդրադարձանք Ռ.Սոլսոյի մտածողության, Բ.Միլների որոշումների ընդունման դասական մոդելներին և այլ հայտնի հոգեբանների մոտեցումներին: Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքում բացահայտված յուրահատկությունները համապատասխանում են ընդհանուր օրինաչափություններին, որոնք արտացոլված էին վերը ներկայացված մի շարք բանաձևերում և գծապատկերներում (օրինակ՝ խնդրահարույց իրավիճակի բացահայտման ու հաղթահարման, այլընտրանքների համեմատման ու ընտրության, բազմաբնույթ խնդիրների համադրության, խմբային որոշումների համակարգի ու հիերարխիայի, կառավարչական որոշումների ընդունման փուլերի և այլն):

Վերջին հետազոտական **3.3.1. ենթագլուխը** նվիրված է անորոշության պայմաններում որոշման կայացման փորձարարական փուլի արդյունքների ամփոփմանը և վերլուծությանը:

Փորձարարական և վերահսկիչ խմբերի համար անց է կացվել մեթոդիկայի նորմատիվների համեմատություն: Ուսանողների թեստավորման ցուցիչներն ունեին հետևյալ դրսևորումները. զգոնություն՝ $\bar{x}_1$ = 13.5, $\bar{x}_2$ = 15.0; գերզգոնություն՝ $\bar{x}_1$ = 4.5, $\bar{x}_2$ = 11,5; խուսափում՝ $\bar{x}_1$ = 11.5, $\bar{x}_2$ = 9.5; հետաձգում՝ $\bar{x}_1$ = 9.5, $\bar{x}_2$ = 11,0: Միատարր ցուցիչների միջև տարբերությունները երեք դեպքում էլ չէին գերազանցում 3.0 միավորը և չբացահայտեց վիճակագրական ճշգրիտ նշանակալի տարբերություն, ինչը փաստում է որոշում կայացնելու ժամանակ առանձնահատուկ ռիսկերի համեմատաբար ադեկվատ ընկալման մասին: Եվ միայն մի դեպքում բացահայտվեց հստակ տարբերություն. ոչ արդյունավետ ռազմավարության դեպքում՝ գերզգոնությունը (երբ $P < 0.001$): Այս առանձնահատկությունը, ըստ երևույթին, կարելի է մեկնաբանել ընտրանքում իգական սեռի ուսանողուհիների առկայությամբ, քանի որ նրանց միջին ցուցանիշները նշանակալիորեն տարբերվում էին տղամարդ ուսանողների ցուցանիշներից: Տվյալ առանձնահատկությունը հաստատեց հետագայում անցկացրած կոռելյացիոն վերլուծությունը, որի ցուցանիշներն ունեին հետևյալ դրսևորումը և

կոռելյացիոն կարևորությունը. Զգոնություն՝ r = 0,58 (երբ P < 0.01), խուսափում՝ r = 0,45 (երբ P < 0.05), հետաձգում՝ r = 0,56 (երբ P < 0.01): Գերզգոնության վիճակագրական ցուցիչը կոռելյացիոն նշանակալի կապ չբացահայտեց:

Տվյալ փուլի վիճակագրական վերլուծության համեմատական ցուցիչները ներկայացված են նկար 2–ում:



Նկար 2. ՈԸՄՀ և Ռավենի մեթոդիկաների թեստավորման ցուցանիշների համեմատական հիստոգրամը: խումբ 1. - քննիչներ (n=40), խումբ 2. – վերահսկիչ (n=37), խումբ 3. - ուսանողներ (n=55)

ՈԸՄՀ մեթոդիկայով թեստավորումը Կորնիլովայի հետազոտությունում բացահայտեցին սեռային տարբերությունների բացակայություն, ինչը նաև կապված է մասնագիտացման հետ: Այդ պատճառով մենք դիմեցինք տարիքային համեմատությանը, մասնավորապես՝ օպերատիվ բնույթի փորձից (իրավաբաններ՝ քննիչներ և ուսանողներ): Տվյալ ենթադրության ստուգման նպատակով կատարվեց ամբողջ ընտրանքի թեստավորման արդյունքների կոռելյացիոն վերլուծություն (n = 132 անձ): SPSS վիճակագրական վերլուծությունից հետո բացահայտվեցին որոշակի օրինաչափություններ, մասնավորապես՝ տարիքային ցուցանիշները որոշում կայացնելու ժամանակ դրականորեն են փոխկապակցվում զգոնության, գերզգոնության և ինտելեկտի հետ: Եվ միայն մեկ դեպքում է տարիքային ցուցիչը հետաձգման հարաչափի հետ կապված բացասական կերպով, որը մեկնաբանվում է որպես դանդաղեցում կամ ձգձգում: Ինտելեկտի ցուցանիշները դրականորեն են փոխկապակցվում զգոնության ու խուսափման, իսկ հետաձգման հետ նույնպես բացասականորեն է կապված:

Հետագայում կազմակերպվեց հետազոտության փորձարարական փուլը, որը ենթադրում էր ռիսկի թեստավորում՝ ըստ Շուբերտի մեթոդիկայի (տեղայնացված Հ. Ավանեսյանի կողմից, 2001) և որոշումների ընդունման գնահատում՝ «պատրանքային նկարներ» խթանային նյութի ներկայացմամբ (Վ. Կարպինսկայայի ձևափոխած տարբերակը, 2003): Ներկայացված խթանային նյութով (պատրանքային տարբեր օբյեկտներ) անցկացված փորձարարական հետազոտության եզրակացությունները

հիմնվել են Վ. Մ. Ալախվերդովի (2006) հայեցակարգի վրա: Արդյունքում հաստատվել է վարկածն այն մասին, որ խթանը հայտնաբերելիս որոշիչ դեր են խաղացել ոչ այնքան զգայական համակարգի աշխատանքը կամ ազդանշանի ֆիզիկական բնութագրերը, որքան ներկայացման (առաջադրման) պայմանները:

Գիտափորձի այս փուլում գնահատվում էր պատրանքային տարբեր երկրաչափական օբյեկտների ընկալման անհատական առանձնահատկությունները, որոնք արձանագրվում էին երեք չափանիշներով՝ լուծման ուշացում, սխալ և դրական լուծում:

Աղյուսակ 1.

Պատրանքների ընկալման ցուցանիշների համեմատություն

Մասնակից n_1= 40 n_2= 56	Լուծման ուշացում	Լուծման սխալները	Դրական լուծումներ	Նկարի բնույթը		
				Չափ	Տարբեր.	Խորու-թյուն
M_1	1.25	1.75	17.1	41%	24.5%	34.5%
M_2	1.36	1.32	19.2	41%	24.5%	34.5%

Փորձարարական աշխատանքի այս փուլում արձանագրվեցին հետևյալ ցուցանիշները՝ տեսողական պատրանքների օրինակները դիտելու գործընթացում ուսանողների մոտ՝ ուշացում ցուցաբերեցին M_1 = 1.25, սխալները առկա էին M_1 = 1.75, համապատասխան դրական լուծում դրսևորեցին M_1 = 17.1 և քննիրների մոտ՝ ուշացում ցուցաբերեցին M_2 = 1.36, սխալները առկա էին M_2 = 1.32, համապատասխան դրական լուծում դրսևորեցին M_2 = 19.2:

Գիտափորձի ընթացքում երկու (ուսանողներ և քննիչներ) խմբերից ստացված ցուցանիշները պատկերավոր տեքսով ներկայացված են նկար 3-ում:



Նկար 3. Գիտափորձի համեմատական ցուցանիշները երկու խմբերի համար (n_1=40, n_2=56)

Ինչպես երևում է նկար 15-ում ներկայացված գծանկարից, խուսափում գործոնի դրսևորումը գրեթե միևնույնն է երկու խմբերի համար, աննշան տարբերություններ են ստացվել ընկալում և գերզգոնություն գործոններից և բավականին արտահայտիչ տարբերություններ գրանցվել են զգոնության, համարձակության և ինտելեկտի տրամաբանական բաղադրիչի հետ կապված:

Նշված առանձնահատկությունները համադրվել են գիտափորձի մասնակիցների տեսողական պատրանքների հետազոտությունից ստացված արդյունքների հետ: Հետազոտության վերջին փուլի արդյունքների համեմատական վերլուծությունը բացահայտեց այն փաստը, որ պատրանքային ազդեցությունը ներգործում է ոչ միայն քննիչների հայտնաբերման շեմերի վրա, այլև որոշման ընդունման գործընթացի վրա: Խմբային ցուցանիշների արձանագրումը բացահայտեց, որ որոշման ընդունման գործընթացը պայմանավորված է համընդհանուր առանձնահատկություններով (բնույթը՝ քողարկված կամ իմպլիցիտային և բացահայտ կամ էքսպլիցիտային) և առանձնահատուկ է դրսևորվում՝ կախված մի շարք գործոններից:

ԵԶՐԱԿԱՑ ՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով այն փաստը, որ բարդ իրավիճակներով հագեցած մասնագիտական գործունեության մեջ, այդ թվում նաև քննչական, դժվար է նախապատվություն տալ վերլուծական կամ համադրական մտածողությանը, առանձնահատուկ այժմեականություն է ձեռք բերում ընդունված որոշման համարժեքության հիմնախնդիրը: Սրա հետ կապված՝ օպերատիվ մտածողության կառուցակարգի համատեքստում աճում է առաջատար այն որակների հետազոտման հրատապությունը, որոնք պայմանավորում են որոշումների ընդունման արագությունն ու ճշտությունը, տրամաբանական բաղադիչը, ռիսկի աստիճանը: Սրանք բոլորը լրացնում են տարբեր մասնագիտությունների տեր անձանց (քննիչների) մասնագիտական կարևոր որակները, որոնց գործունեությունը կապված է բարդ և օպերատիվ պայմանների հետ:

2. Որոշումների ընդունման հարցարանի տեղայնացման գործընթացի, փորձարկման և կիրառման ընթացակագի վերլուծությունը ամրագրեց այն փաստը, որ արդյունքները հարաբերակցվում են հոգեախտորոշման համապատասխան չափորոշիչների հետ: Հետազոտության տվյալ՝ ադապտացիայի գործընթացի վերլուծության ընթացակարգ ենթադրող, փուլի ընդհանրացումը ցույց տվեց, որ առաջադրանքների ընդհանուր քանակը մաղելիս առանձին առաջադրանքներից ստացվել են հավաստի ցուցանիշներ: Վիճակագրական վերլուծությունը ՈԸՄՀ մեթոդիկայի գրեթե բոլոր հարցերից բացահայտեց բավարարող գործակիցներ, որոնք ունեն հոգեչափական հուսալի բնութագրեր և կարող են մեկնաբանվել բնօրինակի նորմերին համապատասխան:

3. Բարդ իրավիճակներում օպերատիվ որոշումների ընդունման հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման համար ընտված հոգեդիագնոստիկ

գործիքակազմը՝ ՈԸՄՀ, Շուբերտի համարձակության թեստը, Ռավենի սանդղակները, և մշակված փորձարարական ծրագիրը բացահայտեցին որոշումների ընդունման անհատական և խմբային ռազմավարությունների (զգոնություն, խուսափում, հետաձգում, գերզգոնություն) օրինաչափ կապերը համարձակության և տրամաբանական մտածողության ցուցանիշների հետ:

4. Որոշման ընդունման տարիքային և մասնագիտական գործունեության ազդեցության համեմատությունը արձանագրեց, որ օպերատիվ բնույթի փորձից (քննիչներ) ազդեցության որոշակի օրինաչափություններ, մասնավորապես՝ տարիքային ցուցանիշները որոշում կայացնելու ժամանակ դրականորեն են փոխկապակցվում զգոնության, գերզգոնության և ինտելեկտի հետ: Եվ միայն մեկ դեպքում է տարիքային ցուցիչը հետաձգման հարաչափի հետ կապված բացասական կերպով, որը մեկնաբանվում է որպես դանդաղեցում կամ ձգձգում: Ինտելեկտի ցուցանիշները դրականորեն են փոխկապակցվում զգոնության ու խուսափման, իսկ հետաձգման հետ նույնպես բացասականորեն է կապված:

5. Բացահայտվել են ինտելեկտի առանձնահատկությունները ոչ վերբալ տրամաբանության ցուցանիշով, որոնք ինտեգրալ են ընդհանրացման, վերլուծության և համադրման հարաչափերով ոչ վերբալ ազդակի նյութի որոշման հիման վրա: Օպերատիվ բնույթի մասնագետին անհրաժեշտ է կարողանալ անցկացնել խնդիրների համալիր վերլուծություն և լուծել խնդիրները անորոշության պայմաններում: Սովորելու ընթացքում անհրաժեշտ է զարգացնել իրավիճակը համալիր վերլուծելու կարողություն, հաշվի առնել բազմաթիվ պայմաններ և ընտրել լավագույն լուծումը: Աշխատողը պետք է կարողանա կանխատեսել հնարավոր խնդիրների տարբերակները և մշակել դրանք կանխելու քայլեր:

6. Փորձարարական հետազոտության արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ պատրանքային ազդեցությունը ներգործում է ոչ միայն հայտնաբերման շեմերի վրա, այլև որոշման ընդունման գործընթացի վրա: Տվյալ դեպքում որոշման ընդունման գործընթացը պայմանավորված է համընդհանուր առանձնահատկություններով (բնույթը՝ քողարկված կամ իմպլիցիտային և բացահայտ կամ էքսպլիցիտային) և առանձնահատուկ է դրսևորվում՝ կախված մի շարք գործոններից:

Աշխատանքը ավարտվում է հատուկ մշակված գործնական առաջարկություններով:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ հրապարակումներում

1. Դուրյան Մ.Կ. Կառավարչական որոշումներ կայացնելու հոգեբանական դետերմինանտների վերլուծություն, Հանրային կառավարում, հոբելյանական թողարկում, №6, Եր., 2014, էջ 262-267:

2. Дурян М.К. Анализ психологических детерминант принятия управленческих решений, Актуальные проблемы современной психологии, Материалы Всероссийской конференции молодых учёных, М.: РУДН, 2014, էջ 189-193:

3. Դուրյան Մ.Կ. Մասնագիտական գործունեության արտակարգ պայմաններում որոշման կայացման գործընթացի նշանակությունը, Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, 5-րդ միջազգային գիտաժողով, Եր., ԵՊՀ, 2015, էջ 97-101:

4. Դուրյան Մ.Կ. Որոշման կայացման հատկանիշների համեմատական վերլուծություն, Փորձարարական հետազոտությունները հոգեբանության մեջ, Երիտասարդ հոգեբանների գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2016, էջ 26-31:

5. Դուրյան Մ.Կ. Անորոշության պայմաններում որոշումների ընդունման մասնագիտական առանձնահատկությունների ուսումնասիրում. Այլընտրանք եռամսյա գիտական հանդես, Եր.2016, N4, 420-426

6. Дурян М.К., Аванесян Г.М. Сравнительное исследование показателей стиля принятия решений у студентов, Высшая школа: Опыт, проблемы, перспективы, Материалы 9-ой международной научно-практической конференции, часть 1, М.: РУДН, 2016, էջ 132-138:

7. Դուրյան Մ.Կ. Որոշման ընդունման և ընկալման հատկանիշների դրսևորման համեմատական վերլուծություն, <<Մխիթար Գոշ>>, ուսումնամեթոդական հոդվածներ, Եր., 2017, № 1, էջ 88-91:

8. Դուրյան Մ.Կ. Исследование взаимосвязи особенностей принятия решений, интеллекта и признаков профессиональной деятельности, Հոգեկան առողջության հայկական հանդես, 8/2, Եր., 2017, էջ 57-61:

9. Դուրյան Մ.Կ. Որոշման ընդունման, ինտելեկտի և մասնագիտական հատկանիշների կապերի հետազոտություն, Այլընտրանք գիտական հանդես, Եր., 2017, №4, էջ 50-56:

10. Դուրյան Մ.Կ. Որոշման ընդունման հատկանիշների համեմատական վերլուծություն, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, №3, Եր., 2017, էջ 103-106:

Марат Карлосович Дурян

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ПРИНЯТИЯ РЕШЕНИЙ СВЯЗАННЫХ СО СЛОЖНЫМИ СИТУАЦИЯМИ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01 – Общая психология, Теория и история психологии, Психология личности. Защита диссертации состоится 30. 04. 2019г. в 14:00 на заседании специализированного совета Психологии и философии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность темы. Во многих видах профессиональной деятельности человека её результат и качество в значительной степени обусловлены процессом принятия решения, который должен быть адекватен конкретным условиям и ситуации. Современные психологические исследования по указанной проблеме показывают, что именно процесс принятия решений определяет содержательные, процедурные и продуктивные параметры деятельности. Основные подходы изучения принятия решения представлены в работах Р. Солсо(2006) и его соавторов, где тщательно проанализированы теоретическая и экспериментальная методологии исследования, основанные на следующих факторах: индуктивное рассуждение, «реализм», аргументация, представительность и оценка вероятностей. Анализ литературы позволил определить степень актуальности и теоретические предпосылки исследования, связанные со следующими подходами к аргументации в процессе принятия решения: с подходом к формирования суждений в квазиаксиоматической теории (Б.А. Корбинский), с подходом о принятии решения по разнообразным суждениям на основе изучения закономерностей задач и проблем принятия решения (Н.В. Воробьёв), с подходом о причинно-следственных связях событий, влияющих на принятие решения (А. Митче) и с критериями предпочтений и замещений по принятию решения (Р. Кени, Х. Райфа). Также были приняты во внимание основные междисциплинарные подходы к исследованию процесса принятию решения в профессиях связанных с особыми, сложными и экстремальными условиями деятельности.

Также были приняты во внимание существующие положения в отечественных исследованиях, посвящённые основным вопросам мышления, творчества и принятия решений (К. В. Восканян, 1980, А. Л. Азизян, 2004, Д. Р. Айрапетян, 2006, Г.Г. Петросян, 2007, А.К. Ананян, 2008, М.И. Акобян, 2010, А.Г. Галстян, 2013, М.В. Тевосян, 2014 и др.).

Таким образом, обобщение анализа указанных концептуальных подходов и основных положений исследовательских работ позволило установить актуальность работы и в дальнейшем разработать стратегию экспериментального исследования психологических факторов эффективности принятия решений, в условиях неопределенности профессиональной деятельности следователей.

Цель исследования. Изучить особенности проявления и динамику развития индивидуальных характеристик и ситуационных критериев, определяющих эффективность принятия решений в условиях неопределенности деятельности.

Гипотеза исследования. Предполагается, что эффективность принятия решений в конкретных условиях деятельности, обусловленная особенностями когнитивной сферы

человека, проявляется и имеет уникальную динамику развития, которая зависит от специфики профессиональной деятельности и опыта.

Задачи исследования:

1. Проанализировать психологические факторы, обеспечивающие эффективное принятие решений в профессиональной и оперативной деятельности.
2. Провести методологическое обоснование выбора и подбора методики исследования принятия решений, применения соответствующей анкеты.
3. Определить проявления, связанные с принятием решений, с атрибутом логического элемента интеллекта, с риском, профессией и опытом работы.
4. Оценить особенностей проявления принятия и характеристики восприятия решений (восприятия различных иллюзорных геометрических объектов).

Научная новизна исследования. Научной значимостью результатов методологического анализа аналитического исследования и многоэтапной экспериментальной работы является то, что обобщение полученных результатов может дополнить информацию о психологических особенностях принятия оперативных решений в сложных ситуациях. В частности, было выявлено влияние опыта следственной деятельности на принятие решений, избегание, отсрочку, бдительность и чрезмерную настороженность. Доказано, что совокупность методов, используемых в процессе исследования, является точным и достоверным средством регистрации проявлений когнитивного поля личности.

Участники исследования. Общее количество участников, вовлеченных в исследование, составило 150 человек (в том числе 10 экспертов). Они были разделены на три группы: 1) студенты-юристы, 2) работающие юристы-следователи и 3) преподаватели гуманитарных наук (контрольная группа).

Теоретическая и практическая значимость исследования. Теоретическая значимость диссертации заключается в том, что теоретический материал, разработанный и проверенный экспериментальным путем, может широко использоваться для решения психодиагностических проблем. Представленный теоретический материал своей обоснованностью также может стимулировать дальнейшие научные исследования в рассматриваемой области. Результаты проведенного исследования могут обеспечить улучшение качества следственной деятельности, а также способствовать преодолению возможных иллюзорных воздействий (военной, спасательной, полицейской и других сферах) в условиях неопределенности. Данное исследование также может способствовать разработке специальных тренингов для преодоления вербальных и невербальных барьеров.

Структура и объем работы. Данная диссертация представлена на 142 страницах, состоит из введения, трех глав, вывода, предложений, списка литературы (184 научных источника) и приложения.

По теме нашей диссертации опубликовано 10 научных статей.

Marat K. Duryan

PSYCHOLOGICAL FEATURES OF DECISION MAKING ASSOCIATED WITH DIFFICULT SITUATIONS

Thesis/dissertation/ for the degree of candidate of psychological sciences in the specialty 19.00.01 - General Psychology, Theory and History of Psychology, Psychology of Personality. The dissertation defense will take place 30. 04. the year of 2019 at 14:00 at the meeting of the specialized council of Psychology and Philosophy 064 Higher Degree Commission(HAC) for the award of scientific degrees at the Armenian State Pedagogical University. Kh. Abovyan, address: 0010, Yerevan, st. Tigran Mets 17.

RESUME

The modernity of the topic. Among such psychological peculiarities of a person's professional activity, where both his readiness and potential capabilities are most fully and explicitly manifested, as well as the limitations coherent to him, is regarded as a subjective choice – the process of making a decision. In many aspects of human professional activity, the outcome and the quality of his activities, in all cases,are largely conditioned by the decision-making process, which is relevant to the situation and the conditions.

Contemporary researches performed in the field of psychology shows that the decision-making process sets out the content, procedural and effective dimensions of the activity**.** Consequently, inappropriate and misleading/wrong/ decisions can adversely affect the outcome of the activity. The fundamental approaches to the decision-making study are presented in the works of R.Solso(2006) and co-authors, where the author has thoroughly analyzed the psychological peculiarities of the decision-making,has interpreted the theoretical and experimental research methodology based on the following factors: inductive judgment, "realism", argumentation, representation and probability assessment.

The analysis of the literature allowed to clarify the theoretical background of the research that relates to the following arguments in the decision-making process: with the approach to the formulation of judgments in a quasiaxiomatic theory (B. A. Korbinski, 2001);with the approch of various jugdments on the decision-making which serves as a bases for studying the regularities of the decision making tasks and problems(N.V.Vorobyov,1963),with the cause-and-effect relationships of the events affecting the decision-making (A.Michote, 1963) and criteria for the preference and the replacement for decision-making (R. Keni, H. Rifa, 1981).

Also taken into account the main interdisciplinary approaches to the study of the process of decision making in professions related to special, complex and extreme conditions of activity.

Furthermore, the existing provisions on the issues of mentality, creativity and decision-making in domestic research have been taken into consideration (K.V. Voskanyan, 1980; A. L. Azizyan, 2004; D. R. Hayrapetyan, 2006; K.Ananyan,2008; A.H.Galstyan, 2013; M.V. Tevosyan, 2014).

Thus, a generalization of the analysis of these conceptual approaches and the main provisions of the research allowed us to establish the relevance of the work and further develop a strategy for experimental research of psychological factors of decision-making efficiency, under conditions of professional uncertainty of investigators.

The purpose of the research. To study the peculiarities of the manifestation and dynamics of the development of individual characteristics and situational criteria that determine the effectiveness of decision-making under the conditions of uncertain activity.

The hypothesis of the research. It is assumed that the effectiveness of decision-making under specific conditions of activity is conditioned by the peculiarities of a person's cognitive sphere, and is characterized by a unique developmental process that depends on the specificity and experience of professional activities.

The research objectives are:

1. Analyze the psychological factors that ensure effective decision-making within professional and operational activities.
2. Carry out the methodological substantiation of selection and replenishment of decision-making research methods, localization of the relevant questionnaire.
3. Reveal the manifestations of decision-making, the logical element of intelligence, and as well as the manifestations of courage, profession and work experience.
4. Assess the peculiarities of decision-making and perceiving characteristics (perception of illusionary geometric objects).

The scientific novelty of the research. The scientific significance of the results of the theoretical-methodological analysis and multi-experimental study of the thesis is that summarizing the findings can supplement information about the psychological peculiarities of operative decision making in complex situations. Particularly,the reflexions on the experience of investigative activity, decision-making, avoidance, delay, vigilance and excessive correlation have been revealed. It has been proved that a set of methods used in the research process is a means of making accurate and reliable recording about the manifestations of the psychological cognitive field. The importance and significance of this study is based on the fact that the work on decision-making and intelligence is scarce and lacking in patriotic psychology.

Research Partisipants. The total number of participants involved in the research was 150 (including 10 experts). They were divided into three groups: 1) student lawyers, 2) working lawyers-investigators, and 3) humanitarian professors (control group). Regardless of the requirement for the control of variables, the participants involved in the three groups correspond to the equivalence principle and to the quasi-experimental research program criteria.

Theoretical significance of the research. Theoretical significance of the thesis is that the theoretical material developed and tested in the experimental way can be widely used to solve psychodiagnostics problems. The presented theoretical material can also encourage further scientific studies of the field that is under the consideration.

The practical significance of the survey is that it has been made a reliable assessment related to the decision, which has been substantiated by a combination of other methodologies. The results of the survey can provide as much as possible the improvement of investigative activities, as well as contribute to overcoming the potential effects of illusions (military, rescue, police and other) under the conditions of uncertainty.

This study can also contribute to the elaboration of specific training exercises aiming to overcome verbal and non-verbal barriers.

The structure and the volume of the work. The dissertation is presented on 142 computer pages, it is composed of introduction, three chapters, conclusions, suggestions,reference list (184 scientific sources used) and the appendix.

On the topic of our dissertation published 10 scientific articles.